Հեղինակային խումբ.
Լելա Կակաշվիլի
Գիորգի Ուգուլավա
Բեքա Կվաճաձե
Իրակլի Փերաձե

Պատմություն 11

Անուն և ազգանուն _____

Քաղաք/գյուղ _____

 სულაკაურის
გამომცემლობა

Բովանդակություն

ԹԵՄԱ I. Միջնադար **4**

Գլուխ 1. Հռոմի գաղափարը միջնադարում և խաչակրաց պատերազմների դարաշրջանը **6**

Գլուխ 2. Եվրոպան և Արևելյան աշխարհը XIII-XIV դարերում..... **44**

ԹԵՄԱ II. Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ **64**

Գլուխ 3. Միջնադարից մինչև Նոր ժամանակ (XV-XVI)..... **66**

Գլուխ 4. Աբսոլյուտիզմի դարաշրջանը Եվրոպայում և Արևելքում **96**

ԹԵՄԱ III. Երկարատև XIX դարը **124**

Գլուխ 5. Աշխարհը հեղափոխությունների և մեծ փոփոխությունների դարաշրջանում **126**

Գլուխ 6. Եվրոպան Վիեննայի կոնգրեսի և բրիտանական խաղաղության ժամանակաշրջանում **160**

Գլուխ 7. Գլոբալ փոփոխությունների դարաշրջանը **186**

I

ԹԵՄԱ

Միջնադար

ԳԼՈՒԽ 1 Հռոմի գաղափարը միջնադարում և խաչակրաց պատերազմների դարաշրջանը 6

ԳԼՈՒԽ 2 Եվրոպան և Արևելյան աշխարհը XIII-XIV դարերում 44



Հին Երուսաղեմի և խաչակիր արքաների պատկերը Լյութերական եկեղեցու առաստաղին

ԳԼՈՒԽ 1

Հռոմի գաղափարը միջնադարում և խաչակրաց պատերազմների դարաշրջանը

ՀԱՄԱՏԵՔՍՏ ՕՐԻՆԱԿ 1. Օտտոն I կայսեր թագադրումը (իշխանություն):

Հենրիխ թագավորի հաջող կառավարումից հետո գերմանական հողերի վրա եկավ նվաճողների հարձակումների ու իշխանության համար առանձին իշխանների պայքարի վերջը: Նրա որդին՝ Օտտոնը, գահը զբաղեցրեց առանց կռվի ու դիմակայությունների: Թագադրումը պետք է տեղի ունենար Ահենում: Հերցոգներ, կոմսեր, ռազմիկներ և Տիրոջ ծառաներ՝ բոլորը հավաքվել էին այնտեղ... Մայնցի եպիսկոպոսը մոտեցավ Օտտոնին, որը կանգնած էր տաճարի կենտրոնում, ապա շրջվեց ժողովրդին և դիմեց նրան. «Ձեզ եմ ներկայացնում Օտտոնին՝ Աստծո ընտրյալին, մեր տիրակալ Հենրիխի կողմից նշանակված և այժմ **արդեն թագադրված բոլոր իշխանների կողմից**: Եթե այս ընտրությունը ձեզ սրտերի համար ընդունելի է, բարձրացրե՛ք ձեր աջ ձեռքը»: Այդ ժամանակ այնտեղ հավաքվածները ձեռքերը բարձրացրին դեպի երկինք և նոր տիրակալին դիմավորեցին հզոր բացականչություններով: Եպիսկոպոսը նրան փոխանցեց սուրը և ասաց. «Վերցրո՛ւ այս սուրը, որով դուրս կմղես Քրիստոսի բոլոր թշնամիներին, անհավատներին և նաև չար քրիստոնյաներին: Ստացի՛ր բոլոր ֆրանկների նկատմամբ իշխանություն և լիազորություն, որ կառավարես բոլոր ֆրանկներին և լինես բոլոր քրիստոնյա ժողովուրդների բարօրության և անվտանգության պաշտպանը:

Եպիսկոպոսը նրան հանդերձավորեց **թիկնոցով** և ասաց. «Այս թիկնոցի քղանցքները, որոնք դիպչում են գետնին, քեզ անընդհատ կհիշեցնեն, որ պետք է լինես հավատքով հաստատուն և ձգտես խաղաղության»:

Եպիսկոպոսը նրան հանձնեց **գավազանը** և ասաց. «Այս խորհրդանիշներով դու քո հպատակներին կկոչես բարության, հայրական հոգատարությամբ կձեռնադրես Աստծո ծառաներին և կողորմաս այրիներին և որբերին»:

Դրանից հետո արքեպիսկոպոսները **սուրբ յուղով** օծեցին Օտտոնին՝ ի նշան աստվածային օրհնության: Եվ նրա գլխին դրեցին ծանր ոսկե թագ, որի քաշը թագավորին հիշեցրեց ծանր պարտականությունները և թագավորության ճակատագիրը:

Արարողությունից հետո թագավորը դուրս եկավ տաճարից և շարժվեց դեպի ճոխ, մարմարե սեղանը: Նրան սպասարկում էին դուքսեր, որոնց վրա թագավորը հիմնվում էր պետության կառավարման գործում, և նրա իշխանության հենարանը հենց նրանք էին: Լոթարինգիայի կոմս Գիլբերտը սպասարկում էր սեղանը և զբաղեցնում կամերհերի պաշտոնը: Ֆրանկոնիայի դուքս Էբերհարդը տնօրինում էր սեղանի վրա կարգուկանոնի հարցը, Շվաբիայի դուքս Հերմանը լցնում էր տիրակալի գավաթը, Բավարիայի դուքս Առնուլֆը գլխավորում էր ասպետներին և պաշտպանում տիրակալի անվտանգությունը, իսկ Սաքսոնիայի իշխան Զիգֆրիդը արքայազնի դաստիարակն էր ու բանակի հրամանատարը:

Առաջադրանք 1

Համատեքստ օրինակին ծանոթանալուց հետո լրացրո՛ւ աղյուսակը, որում կգնահատես Հռոմեական Սրբազան կայսրության մեջ եղած կառավարման մոդելը։

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ	ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ	ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ	ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ	ԳՆԱՀԱՏՈՒՄ		ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԵՏ
				ԴՐԱԿԱՆ	ԲԱՑԱՍԱԿԱՆ	

Համատեքստ օրինակ N2. Երուսաղեմը և այդ դարաշրջանի Սուրբ Երկիրը քրիստոնյաների աչքերով (տարածություն)

Սուրբ Երկիրը ընդարձակ ծովից արևելք, որտեղ ծնվել է, գործել և քարոզել և վերջում մահացել մեր փրկիչ Հիսուս Քրիստոսը, գտնվում էր քրիստոնեական հողերի սրտում։

Այնտեղ ամեն քայլափոխի կարելի է տեսնել մի վայր, մի քար կամ ծառ, **որը մեր Փրկչի գործունեության վկան է և այս սրբությունը կրողը**։ Այնտեղ դեռ կարելի է տեսնել տեսանելի հրաշքներ, որոնց մասին մեզ պատմում էին մեր Սուրբ հայրերը։ Մեր Փրկչի հայտնությունից հետո մարդիկ նրա անունը պղծեցին բազմաթիվ մեղքերով, որոնց պատճառով շատ դժբախտություններ են պատահել մեզ հետ։ Մեր մեղքերից հնարավոր է ազատվել Սուրբ Երկիր գնալով և սուրբ վայրեր ուխտագնացությամբ։ Այնտեղ կարելի է ուղևորվել **ինչպես ծովով, այնպես էլ ցամաքի տարանցմամբ։** Եթե **որոշես ցամաքով մեկնել,** պետք է մեկնես **սուրբ քաղաք Հռոմի հարավում՝ դեպի Մեսինա նավահանգիստ**, որտեղ բազմաթիվ քրիստոնյա ուխտավորներ են հավաքվում քրիստոնեական երկրներից և նավեր են սպասում արևելք ուղևորվելու համար։ Եթե որոշես **ցամաքով** մեկնել, ապա նախ պետք է անցնես **գերմանացիների, իսկ հետո՝ հունգարացիների հողերով**, հատես մեծ գետը և հասնես հույների կայսեր վեհ և հոյակապ քաղաք, իսկ այստեղից սկսվում է վտանգավոր ճանապարհը, քանի որ **տարածությունը Կոստանդինի քաղաքից մինչև Սուրբ Երկիր վերահսկում են մուսուլմանները**։

Սա տարբեր մարդկանց հանդիպման վայր է, Սուրբ քաղաքի փողոցներում կհանդիպեք տարբեր կրոնի և ծագման մարդկանց։ Նրա փողոցներում դուք կլսեք խոսք արաբների, պարսիկների, եգիպտացիների, հույների, ֆրանկների, հինդուների, թյուրքերի, հայերի և վրացիների լեզվով։ Այստեղ կուտակվում են բազմաթիվ **արժեքավոր ապրանքներ**, իսկ նավահանգիստներում դուք կհանդիպեք բազմաթիվ երկրներից ժամանած նավերի, որոնք բեռնված են գործվածքներով, տարօրինակ կենդանիներով, ապրանքներով և թանկարժեք ակնեղենով։

Վաղուց **այս հողերում խաղաղություն չեն տեսել**, այստեղ մոլեգնում է քրիստոնյաների ու մուսուլմանների միջև պատերազմը, նրանց բանակները կռվում են միմյանց դեմ, բայց քրիստոնյա և մուսուլման **վաճառականները անարգել փոխանակում են ապրանքները և անձեռնմխելիորեն ճանապարհորդում միմյանց հողերի վրա**։ Սուրբքաղաքի քրիստոնեական տաճարներում դուք կլսեք աղոթքներ տարբեր լեզուներով։ Լատինները, հույները, հայերը և վրացիները իրենց ծիսակարգով փառաբանում են Տիրոջը, իսկ մի փոքր այն կողմում՝ մահմեդական սրբավայրի մինարեթից, մուեզինը կանչում է մուսուլմաններին աղոթքի։

Սուրբ Երկրում **կլիման տաք է և խիստ**: Երուսաղեմի շրջակայքում առավելապես աճում են ձիթենիներ ու արմավենիներ: Ջուրը քիչ է, և մշակվող հողատարածքները հիմնականում հանդիպում են **ծովի մոտակայքում, Անտիոքի ու Տրիպոլիի** մոտակայքում: Այստեղ ապրող մարդկանց համար եկամտի հիմնական աղբյուրը առևտուրն է, քանի որ բերքը քիչ է և այն էլ առավելապես **Սուրբ գետի** (որում մկրտվել է մեր Փրկիչը) **շրջակայքում:** Ով տիրապետում է այս տարածքներին, նրա ձեռքում է Տիրոջ գերեզմանը, որը շատ մեծ հրաշագործ ուժ ունի: Բացի այդ, այս տարածքների մոտ են գտնվում հարուստ և զարգացած Արևելյան պետություններ Եգիպտոսը, Պարսկաստանը և հնդկական հողերը:

Առաջադրանք 2

Համատեքստ-օրինակին ծանոթանալուց հետո կատարե՛ք գրաֆիկական առաջադրանքը.
Քրիստոնյաների աչքերով տեսած Երուսաղեմը և Սուրբ Երկիրը:



Համատեքստ-օրինակ N3. Եվրոպական հասարակությունը XIII դարում

Բնակչությունն օրեցօր ավելանում է, և քաղաքը նորանոր շենքեր են զարդարում ... Հողի բերրիությունը և սպառողական բարիքի առատությունն ակներև է ... Չկա որևէ առողջ մարդ, որ չկարողանա **կերակրել իրեն և իր ընտանիքը**, եթե նա անբան չէ: Քաղաքի նավահանգիստ ամեն օր արևելքից տարբեր ապրանքներով բեռնված նավեր են գալիս: Տոնավաճառի օրը մարդիկ պատարագին չեն մասնակցում, և քաղաքը նման է մեղքի մեծ որջի, ասես մարդկանց սրտերում բույն են դրել ագահությունը, ու խարդախությունը գերազանցում է նրանց բոլոր արժանիքները:

Նավահանգստին **մոտ է գտնվում շուկան**, որն ամենամարդաշատ վայրն է:

Այստեղ դուք կհանդիպեք բազմաթիվ մասնագիտությունների և խավերի մարդկանց: Հարուստ վաճառականներն ամենուր առանձնանում են իրենց մետաքսե հագուստով ու մեծ

եռանդով, որով նրանք փորձում են գնել թանկարժեք մորթիներ, պարսկական գործվածք կամ այլ ապրանքներ: Այստեղ դուք կհանդիպեք վաճառականների այլ խմբերի, որոնք առանձնանում են իրենց վաճառքի ապրանքներով, այստեղ կան ոսկերչությամբ զբաղվող հրեաներ, որոնք տարբերվում են յուրօրինակ գլխարկներով: Կհանդիպեք նաև սպասքի առևտրով զբաղվող հույների և ձկի ու տարբեր սննդամթերքի առևտրով զբաղվող տեղացիների, որոնք տարբեր հատիկայինները և միրգը բերում են քաղաքի մերձակայքում գտնվող դաշտերից:

Դուք կարող եք հեշտությամբ ճանաչել զինված **ասպետներին**: Ազնվականներին, ովքեր թանկարժեք հագուստով են և նրանց ուղեկցում են օտար լեզուներով խոսող բազմաթիվ ծառաներ, օտար լեզվով խոսող **վաճառականների և նավաստիների**, որոնք պանդոկներում և գինետներում են ապաստանում: Քաղաքում ամենաբարձր շինությունը **Սուրբ տաճարն** է, որի մինչև երկինք խոյացած գմբեթները հնարավոր է տեսնել քաղաքի բոլոր թաղամասերից: Նրա մոտակայքում կհանդիպեք **ճոխ թիկնոցներով հանդերձավորված եպիսկոպոսների և հասարակ կոպիտ զգեստներով միաբանության վանականների**:

Քաղաքում կա առանձին բնակավայր, որտեղ ապրում են **հրեաներ և այլ «հերետիկոսներ»**, ովքեր հողի սեփականության իրավունք չունեն, ուստի նրանց հիմնական գործունեությունն է դարձել ապրանքների առևտուրը: Նրանք հաճախ դառնում են ազնվականների կողմից ագրեսիայի թիրախ, որովհետև հրեա վաճառականների **հարստությունը գրավում է նրանց**: Շատ վաղուց, երբ քաղաքում առաջին անգամ տարածվեց **սարսափելի հիվանդությունը,** սկզբում այն առաջացավ հրեա վաճառականների նավից: Մարդիկ հավատում էին, որ **Աստված բերեց այս աղետը քաղաքի և այնտեղ ապրող քրիստոնյաների վրա քաղաքում հերետիկոսների առկայության պատճառով**: Այդ ժամանակ հալածանքներից տուժել են հրեաների մեծ թվով տներ և գույք: Այժմ նրանք կրկին ապրում են քաղաքի արվարձաններում, որտեղ հաճախ կհանդիպեք վաշխառուների վաճառասեղանների: Քաղաքի մնացած բնակչությունը խուսափում է բնակություն հաստատել հերետիկոսների մոտակայքում: Նրանք խուսափում են, քանի որ հավատում են, որ պատժի կարժանանան Աստծո և իրենց տերերի կողմից:

Առաջադրանք 3

Համատեքստ օրինակին ծանոթանալուց հետո լրացրե՛ք աղյուսակը, որի միջոցով կարող եք դատողություն անել, թե ինչպիսին էր XIII դարի եվրոպական հասարակությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՎ/ԽՈՒՄԲ	ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ	ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅԼ»-Ի ՆԿԱՏՄԱՄԲ	ԱՄԵՆՕՐՅԱ ԿՅԱՆՔՆ ԱՐՏԱՅՈԼՈՂ ՆՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ԳԼՈՒԽ 1

Հռոմի գաղափարը միջնադարում և խաչակրաց պատերազմների դարաշրջանը

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Զեկուցում խաչակրաց արշավանքների մասին

Պատկերացրո՛ւ, որ XI դարում Հռոմի պապի արքունիքում աշխատող մի գիտնական ես, Պապի խորհրդականը: Քեզ մոտ գաղափար է ծնվել խաչակրաց արշավանքներ սկսելու մասին: Հռոմի պապին **գրավոր զեկուցում** ներկայացրո՛ւ, որում ձևակերպված կլինի, թե երբ և ինչու պետք է սկսվեն խաչակրաց արշավանքները, ինչը պետք է լինի արշավանքների նպատակը, և ինչ կտա այն մի կողմից՝ Պապի իշխանությանը, մյուս կողմից՝ եվրոպական աշխարհին:

Գրավոր զեկուցման մեջ հստակ ցո՛ւյց տուր.

Քայլ 1

1. Բնութագրի՛ր այն տարածությունը և աշխարհագրական միջավայրը, որտեղ պետք է իրականացվի խաչակրաց արշավանքը: Ընդգծի՛ր այս տարածքի տնտեսական, մշակութային և կրոնական նշանակությունը եվրոպական աշխարհի համար: *(Տարածություն, Ուս.գ.1, 3)*

Քայլ 2

2. Ինչ դեր պետք է ունենա Հռոմի պապը խաչակրաց արշավանքներում, և ինչպես կանդրադառնա դա Պապի իշխանության վրա: *(Իշխանություն, Ուս.գ.2, 3, 4)*

Քայլ 3

3. Բնութագրի՛ր Բյուզանդիայի և թուրքական աշխարհի վիճակը այս դարաշրջանում և դատողությո՛ւն արա, թե ինչ գործոններ կնպաստեն խաչակիրների հաջողությանը: *(Տարածություն, Ուս.գ. 2, 3)*

Քայլ 4

4. Ինչ տնտեսական և քաղաքական օգուտ կբերի խաչակրաց արշավանքը քրիստոնեական տարածքին: *(Տարածություն, Ուս.գ 1, 3)*

Հասկացություն

- Իշխանություն
- Տարածություն
- Աղբյուր

Քայլ 1 Մշակման համար (Պարագրաֆներ՝ 1-2, 3-4)

§1-2. Ի՞նչ մարտահրավերների բախվեց Բյուզանդական կայսրությունը Մակեդոնական դինաստիայի կառավարումից հետո:

§3-4. Ինչպե՞ս ձևավորվեց Արևելքում հզոր Թյուրք-սելջուկյան կայսրությունը:

ա. Ծանոթացի՛ր էլ.ռեսուրսներին.

- Թուրք-սելջուկները և Մերձավոր Արևելքը, Մանազկերտի ճակատամարտը: Silk School
  https://bit.ly/3YWpyA9
- Բյուզանդիա-սելջուկների պատերազմները: Մանազկերտի ճակատամարտը: Kings and Generals
  https://bit.ly/3Xyv5f3

բ. Քարտեզներով փոխանցված պատմություն

Դիտի՛ր ստորև տրված քարտեզները և գրի՛ր համառոտ ակնարկ Բյուզանդիայի տարածքի մասին նրա ծագումից մինչև XI դարի II կեսը:

Քարտեզ №1

Քարտեզ №2

Քարտեզ №3

Քարտեզ №4

Քարտեզ №5

Քարտեզ №6

Բյուզանդիայի տարածքային փոփոխությունները (համառոտ ակնարկ)

_____

_____

_____

_____

գ. Աշխատանք սխեմայի վրա

Մտածի՛ր և լրացրո՛ւ սխեման Բյուզանդիայի առջև ծառացած խնդիրների մասին XI դարում:



դ. Տարբեր տեսակի աղբյուրների ըմբռնում

Համեմատի՛ր տարբեր տեսակի աղբյուրներում տրված տեղեկությունները, § 3-4 Քարտեզ՝ Թյուրքական ծագման ժողովուրդների տեղաշարժը (գունավոր տարբերակը տե՛ս դասագրքում, էջ 25): Աղբյուր 2՝ Օղուզական էպոս «Գորգուտ պապի գիրքը», IX-XII դդ. (էջ 27): Աղբյուր 3՝ Աբու ալ-Ֆարաջ Իբն-Լիբրի, XIII դ. սիրիացի պատմաբան (էջ. 27) և պատասխանի՛ր տրված հարցերին:

Քարտեզ: Թյուրքական ծագման ժողովուրդների տեղաշարժը



Հարցեր աղբյուրների վերլուծության համար.

1. Ըստ քարտեզի՝ բնութագրի՛ր այն աշխարհագրական տարածքը, որտեղ ապրել են թյուրք-սելջուկները, բացատրի՛ր պատճառները, թե ինչու կարող էին նրանք սկսել տեղափոխվել նոր տարածք:

2. Դատողությո՛ւն արա թյուրք-սելջուկների մշակութային, աշխարհագրական և տնտեսական առանձնահատկությունների մասին:

Ե. Աշխատանք աղյուսակի վրա

Դասագրքում ծանոթացի՛ր § 3-4-ում տրված տեղեկություններին և լրացրո՛ւ աղյուսակը. Ինչպիսի՞ն էր թյուրք-սելջուկների քոչվոր հասարակությունը:

	ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	ՆՊԱՏԱԿՆԵՐ	ԲՆՈՒԹԱԳՐԵՐ		ԽՆԴԻՐՆԵՐ	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻ, ԻՐԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԲՆԻԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ	ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ
			Մշակութային	Տնտեսական			
ԹՅՈՒՐՔ-ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ							